ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՏՈՒԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 1-ին կետը և քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 1-ին կետով սահմանված ժամանակահատվածում, Երևանի քաղաքապետարանի և տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրերում վարձակալի ու կառուցապատման իրավունք ունեցող անձի կողմից, համապատասխանաբար վարձավճարների և կառուցապատման վճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա տույժը (տուգանքը) սահմանել 0%:

2. Պայմանագրերով սահմանված, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 1-ին կետով սահմանված ժամանակահատվածում առաջացած, և չվճարված վարձավճարների ու կառուցապատման վճարների վճարման վերջնաժամկետ սահմանել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում COVID-19 նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերը և վերջինով պայմանավորված տնտեսական գործունեությունների արգելքը, անհրաժեշտություն է առաջացել թեթևացնելու վարձակալության և կառուցապատման իրավունքով կնքված պայմանագրերի կողմ հանդիսացող սուբյեկտների ֆինանսական բեռը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վարձավճարների և կառուցապատման վճարների չվճարման հետևանքով առաջացած տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վարձավճարների և կառուցապատման վճարների չվճարման հետևանքով առաջացած տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ